ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմա՝ Սովորողների մեջ առարկայի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը նպաստող ռազմավարությունների կիրառում:

Կազմեց՝ Սաթինե Խաչատրյան

Դպրոց՝ Կապանի N6

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գրական ակնարկ

Գործնական համատեքստ

Հետազոտության համատեքստ

Դասի օրվա պլան, Հովհաննես Թումանյան

Դասի օրվա պլան, Միսաք Մեծարենց

Դասի օրվա պլան,

Եզրակացություն

Գրականության ցանկ

Ներածություն

Յուրաքանչյուր սովորողի գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և շարունակաբար զարգացնելու նպատակով կրթության ոլորտում կատարվում են որոշակի բարելավումներ և մշակվում դասավանդման տարբեր մեթոդներ և ռազմավարություններ: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: (Խաչատրյան Ս., 2020, էջ 21) : Յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ լեզուն մտածողության հիմնական միջոցն է: Մայրենի լեզուն մեզ օգնում է արտահայտել սեփական մտքերն ու հույզերը, շփվել մարդկանց հետ, հասկանալ շրջապատող աշխարհը և մարդկանց, գրական-գեղարվեստական արժեքներին հաղորդակից դառնալ: Լեզուն մեզ բացառիկ հնարավորություն է տալիս դրսևորելու մեր ստեղծագործական ունակությունները: Գրականության և քերականության ուսուցման գլխավոր նպատակը մայրենի լեզվի գերազանց իմացության ապահովումն է: Մայրենի լեզուն կրթության լեզուն է: Ուստի կարևորելով հայոց լեզու և գրականություն առարկաների իմացությունը՝ ես որոշեցի իմ հետազոտական աշխատանքը իրականացնելու համար ընտրել

Ի՞նչ անել, որ երեխան սիրով գնա դպրոց, հեշտությամբ սովորի:

Ո՞ր չափանիշը թույլ կտա գնահատել երեխայի պատրաստվածությունը դպրոցական կյանքին:

Բազում ծնողներ կարծում են, որ այդ չափանիշը նախնական գիտելիքն է՝ գրել, կարդալ իմանալ, հաշվարկներ անել: Որ այս ամենը թույլ կտա հեշտ հարմարվել ուսումնառությանը: Սակայն սա բավարար չէ հարմարվելու համար: Գիտելիքով զինված բազմաթիվ երեխաներ հենց առաջին ամիսներին կարող են անտարբերություն ցուցաբերել, խախտել կանոններ, բացասական խոսել դպրոցի մասին և, ի վերջո, հրաժարվել դպրոց գնալ: Դպրոցական նյութը երբեմն անհետաքրքիր է երեխային, անհրաժեշտ է մոտիվ՝ որոշակի «անհետաքրքիր», բարդ, հոգնեցնող նյութերը սովորել կարողանալու համար: Ժամանակակից մանկավարժության հիմնական խնդիրներից մեկը երեխաների սովորելու, գիտելիքներ ստանալու ցանկության եւ հետաքրքրության պակասն է: Որոշ երեխաների մոտ ուսման գործընթացի դրդապատճառներն անհետանում են, այլևս չհայտնվելու հիմքով, մյուսները՝ տարբեր պատճառներով: Մոտիվացիոն

պատրաստվածության մասին խոսելիս նկատի ունենք ճանաչողական հետաքրքրությունը. աշակերտին,ով պետք է հետաքրքիր նոր բան իմանա:

4.Ճանաչողական հետաքրքրությունը աշակերտի մեջ կա ի ծնե. շատ կարևոր է զարգացնել այն՝ պատասխանելով «ինչուիկ» հարցերին, խաղալով զարգացնող խաղեր, խրախուսելով ցուցաբերած հետաքրքրությունը, սկսած գործն ավարտի հասցնելը՝ դրանով բարձրացնելով նրա ինքնագնահատականը, խթանելով դժվարություն հաղթահարելու ձգտումը, խթանելով նոր գիտելիքն ինքնուրույն գտնելու, կիրառելու, «շոշափելու» ձգտումը : Դասի յուրաքանչյուր թեման մատուցելուց առաջ՝ նախապատրաստվելով դասին, ուսուցիչը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

ի՞նչ սովորեցնել, որ հետաքրքիր լինի սովորողին:Ինչպե՞ս սովորեցնել, որ նրա մեջ ցանկություն առաջանա շարունակելու այդ կրթությունը:Ինչու՞ սովորեցնել:Որտե՞ղ կիրառել այդ ամենը:Կյանքի ո՞ր հատվածում այն կօգնի սովորողին հաղթահարելու արգելքները... Եթե սովորողը դասի ժամանակ տեսնում և հասկանում է, որ ինքն է իր գիտելիքը ձեռք բերում, ինքն է հայտնաբերում, ինքն է սովորեցնում, ինքն է փոխանցում այն, նրա մոտ սովորելու մեծ հետաքրքրություն է առաջանում: Քանի որ այդ գործընթացն ընթանում է իր համար հաճելի, համապատասխան պայմաններով և գործիքներով պայմանավորված միջավայրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

ա) Ուսումնական մոտիվացիա

Կրթել մարդուն ժամանակակից կրթական համակարգում, նշանակում է դաստիարակել նրան մարդկային գործունեության հիմնական ձևերում բացահայտելու և ստեղծելու կարողություն և կարիք: Անհրաժեշտ է ուսուցումը կառուցել այնպես, որ աշակերտը հասկանա և ընդունի ուսուցչի առաջադրած նպատակները, որպեսզի նա ակտիվ մասնակից լինի դրանց իրականացմանն ուղղված աշխատանքներին: Մասնագիտական գրականության մեջ մոտիվացիան դիտարկվում է որպես բարդ, բազմաստիճան մի համակարգ, որը կարգավորում է անձի կենսագործունեությունը, նրա վարքը և գործելակերպը: Շատ հաճախ ինչ-որ բան անելու համար մեզ պակասում է մի կաթիլ մոտիվացիա: Արդյունավետ դասավանդման հիմքում ընկած է սովորողների մոտիվացիան: Թեմայի արդիականությունը կապված է նոր կրթական համակարգին հարմարվելու անհրաժեշտության հետ: Սովորելու մոտիվացիան դինամիկ երևույթ է, այն փոխվում է մարդու կյանքի ընթացքում և յուրաքանչյուր տարիքում ունի իր առանձնահատկությունները: Մոտիվացիան ցանկացած գործունեության հիմքն է, այդ թվում՝ կրթական: Վ.Ա.Սուխոմլինսկին ասել է. «*Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով ավելի լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ*

ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»: Մոտիվացիան մարդու վրա ազդելու գործընթաց է՝ որոշակի դրդապատճառների ակտիվացման միջոցով նրան որոշակի գործողությունների դրդելու համար: Այսինքն, մոտիվացիան խթան է, որը մեզ ստիպում է գործել: Կրթական մոտիվացիայի ձևավորումը կարելի է համարել կրթության կենտրոնական խնդիրներց մեկը:

Ա.Մասլոուն դիտարկում էր մոտիվացիան, որպես բարդ, բազմաստիճան, անհամասեռ համակարգ, որը ներառում է անձի պահանջները, մոտիվները, հետաքրքրությունները, ձգտումները, կարգադրումները, էմոցիաները, նորմերը և արժեքները, որոնք պայմանավորված են անձի այս կամ այն պահանջմունքով» (Маслоу А. Мотивация и личность. – СПб., 2006, էջ 126): Ըստ Լ.Ի.Բոժովիչի, «մոտիվացիան ուղղվում է արտաքին աշխարհի այս կամ այն առարկաներին և գաղափարներին, պատկերացումներին և ապրումներին, որոնք մարմնավորում են անձի պահանջները և լավագույնս արտահայտում են դրանք» (Божович, Л. И., Проблема развития мотивационной сферы ребенка, М.: Педагогика, 1972, էջ՝ 44): Եթե ուսումնական գործունեության ընթացքում աշակերտի մոտ նկատվում է ձգտում դեպի ուսուցանվող առարկայի բովանդակությունը, ուսումնական գործընթացն ընդհանուր առմամբ, ապա դա խոսում է այն մասին, որ տվյալ երեխան առաջնորդվում է ճանաչողական մոտիվներով (Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М.: Просвещение, 1990, էջ 46) :

բ) *Ճանաչողական հետաքրքրության զարգացում*

Ճանաչողական հետաքրքրությունը աշակերտի ուսումնական մոտիվացիայի կարևորագույն աղբյուրն է: Այն շատ մեծ ազդեցություն է թողնում առհասարակ ճանաչողական գործընթացի վրա: Այդ իսկ պատճառով ուսման ընթացքում դասավանդվող առարկայի հանդեպ հետաքրքրության խթանումը աշակերտների մոտ հանդիսանում է մանկավարժի կարևորագույն խնդիրներից մեկը: Եվ մանկավարժը իր ձեռքի տակ ունի համապատասխան մեթոդական և ուսումնական հնարքների մի ամբողջական բանակ՝ այդ խնդիրն իրագործելու համար: Ունենալով այնպիսի մտավոր ուժ, որն ընդունակ է ցանկացած տեղից օգտակար տեղեկատվություն քաղել, մարդն իր ամբողջ կյանքը կուսումնասիրի, ինչը, իհարկե, ցանկացած դպրոցական կրթության հիմնական խնդիրներից է:

Գործնական համատեքստ

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցական առարկաների դասավանդման ժամանակակից մեթոդների հրատապ խնդիրներից է: Ինֆորմատիկայի դասարանում հայոց լեզվի և գրականության դաս անցկացնելու փաստը սովորողների մոտ հետաքրքրություն է առաջացնում և ի հայտ է գալիս մոտիվացիա: Սովորողը զգում է գիտելիքի կարիք: Սովորողը հետաքրքրված է

համակարգչի միջոցով նոր նյութ սովորել՝ ստուգելով իր գիտելիքների մակարդակը: Համակարգիչը կարող է օգտագործվել ուսուցման բոլոր փուլերում՝ *նոր նյութ բացատրելիս, ամրագրում, կրկնություն, գիտելիքների, հմտությունների և արդդությունների վերահսկում:* Նորարական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ աշակերտներն առանց հասկանալու մտնում են դասի մեջ, սովորում են խաղալով, ոգևորված՝ հասկանալով ինչպես ներգրավվեցին դասին:*Դասարանում ՏՀՏ-ի օգտագործումը լավ արդյունքներ է տալիս. օգնում է աշակերտների ճանաչողական գործունեության և առարկայի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: Զարգացնում է սովորողների տրամաբանական մտածողությունը, զգալիորեն բարձրացնում է ռեֆլեկտիվ գործողությունների մակարդակը դասարանում ուսումնասիրվող նյութով:* Կրթության որակի կառավարման գործընթացը նոր մակարդակի է հասնում, ինչը հաստատում են աշակերտների կրթական և արտադպրոցական գործունեության արդյունքները:

Հետազոտական աշխատանքն իրականացնելու համար ընտրել եմ 8–րդ դասարանները: 8–րդԲ դասարանում սովորում են 22 աշակերտ, իսկ 8–րդ Գ–ում՝ 23: Զուգահեռ դասարաններում կազմակերպել եմ 2 դաս՝ ավանդական և ժամանակակից մեթոդներով: Ընտրել եմ Հովհաննես Թումանյանի կյանքը, ստեղծագործությունները և կապը բնության ու արվեստի հետ: Դասի նպատակն է ուսուցանվող թեմայի վերաբերյալ, խմբային աշխատանքի, ժամանակակից մեթոդների միջոցով ունեցած գիտելիքների ամրակայում, սեր դեպի գրականությունը և գիրքը:

Հետազոտության ընթացք

Ցավոք մեր դպրոցում միայն մեկ համակարգչային կաբինետ կա, մի փոքր դժվարություն է առաջանում տեխնոլոգիաների կիրառումը բոլոր դասերի ընթացքում: Բայց հնարավորության դեպքում ակտիվորեն կիրառում եմ տեղեկատվական տեխնոլոգիաները, քանի որ կարծում եմ, որ ներկայումս կրթական գործընթացի բարելավման հիմնական ուղղություններից մեկը հենց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն է տարբեր տեսակի պարապմունքների անցկացման համար: Պրակտիկան ցույց է տալիս, որ տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է կրթության որակն ու արդյունավետությունը, զարգացնում կրթական գործունեությունը: Այն արդյունավետ խթան է դպրոցականների կրթության համար,ինչպես նաև սովորողների մեջ առարկայի նկատմամբ առաջացնում է սեր և հետաքրքրություն:

8–րդ Գ դասարանում դասը կազմակերպեցի ժամանակակից մեթոդներով: Նախապես կազմեցի հայտորոշիչ թեստ, բաժանեցի աշակերտներին, որպեսզի

ստուգեմ նրանց հետաքրքրությունները, գիտելիքները ՏՏ–ի վերաբերյալ, իմանամ նրանց կարծիքը դասերը ՏՏ–ի խաղ–վարժությունների միջոցով անցկացնելու մասին:

Դասի սկզբին աշակերտները դիտեցին տեսանյութ, (3_5 րոպե) որից հետո առաջադրեցի ուշադրությունը ստուգող հարց. Ինչ կապ տեսաք Կոմիտասի, Թումանյանի և Արմեն Տիգրանյանի գործունեության միջև: Այնուհետև աշակերտները հերթով պատմեցին հետքրքիր տեղեկություններ Թումանյանի կյանքից, հուշերից, ստեղծագործություններից, հիշեցին գրողի նախասահրությունները, գրական գործունեությունը, փորձեցին ներկայացնել Թումանյանին որպես հայր, ամուսին, ընկեր և քաղաքացի:

Գունավոր թղթերի միջոցով դասարանը բաժանեցի 3 խմբի: Յուրաքանչյուր խմբին բաժանեցի 5-ական հարց: (Հարցերը կազմել եմ learningapp կայքով): Բոլոր հարցերը էկրանին ցուցադրված էր :

Առաջին խմբին տրվեց հետևյալ հարցերը:

1. Որն է Թումանյանի տոհմական զինանշանը:
2. Վերականգնել քառյակի խառը տողերը:
3. Ինչ է ասել Թումանյանը Հ. Քաջազնուն Կովկասյան լեռների մասին:
4. Որ ստեղծագործության առիթով է Աղայանը գովել Թումանյանին ինչի համար հեղինակը ասել է << Սրա-նրա մոտ այնքան է գովել, որ խալխը հենց գիտի Բայրոնի ազգականն եմ>>;
5. Թումանյանը որ կին գրողի համար և ինչու գնեց կապույտ հավկինթներով կողով, ծաղիկների հետ կապված ինչ զավեշտական բան կատարվեց:

Երկրորդ խմբին տրվեց հետևյալ հարցերը:

1. Որ ստեղծագործունեության հիման վրա է Ալեքս. Սպենդիարյանը գրել <<Ալմաստ>> օպերան:
2. Շարունակել
   Աշխարհում հաստատ չկա ոչ մի բան, ու մի հավատա…
3. Թումանյանի որ ստեղծագործությունն է սկսվում հետևյալ տողերով:
4. Բարձրագահ Աբուլն ու մթին սարեր…
5. Որ թղթադրամի վրա է պատկերված Հովհ. Թումանյանը:
6. Վերականգնել բանաստեղծության տողերը:

Երրորդ խմբին տրվեց հետևյալ հարցերը:

1. Ներկայացրեք Թումանյանի 10 իրերը:
2. Վերականգնել բանաստեղծության խառը տողերը:
3. Նշվածներից ով է Թումանյանի սրտակից ընկերը:

4. Ինչ նպատակ ուներ Վերնատունը: Ովքեր էին հիմնադիրները:
5. Ներկայացրեք հայ գրողներից որևէ մեկի գնահատության խոսքը ուղղված Թումանյանին:

Աշակերտները մեծ ոգևորությամբ քննարկում էին իրար հետ, հերթով եկան պատասխանեցին, էկրանին դասավորեցին քառյակի խառը տողերը: Արդյունքները ամփոփեցի : Աշակերտներին բաժանեցի գնահատման ռուբրիկներ, որի միջոցով կատարին ինքնագնահատում:

Տրված առաջադրանքները նորություն էր աշակերտների համար: Նրանք առաջին անգամ էին գրականության դասին աշխատում էկրանի վրա, չկար պասիվ աշակերտ: Բոլորը ցանկանում էին գալ, պատասխանել, դասավորել քանդված տողերը: Դասարանում առաջացել էր ոգևորության մի մեծ ալիք:

Այս մեթոդով ես կարողացա բարձրացնել աշակերտների հետքրքրվածությունը, ոգևորությունը առարկայի նկատմամբ: Հարցումներից ակնհայտ դարձավ, որ աշակերտներին դուր եկավ այս դասը, նրանք նշել էին, որ ցանկանում են բոլոր դասերը անցկացնել ժամանակակից մեթոդներով:

Այս դասի շնորհիվ ես կարողացա աշակերտների մեջ զարգացնել լեզվական գրագիտություն և կարողունակություն, սովորել սովորելու կարողունակություն, թվային և մեդիա կարողունակություն, մշակութային և ինքնաճանաչողական կարողունակություն:

Ստուգելու համար, թե աշակերտների մոտ ինչ մոտիվացիա է առաջացել , կազմել եմ հարցաթերթիկներ, որը լրացրել են սովորողները:

Դասը անցկացնելուց հետո աշակերտները լրացրել են ՏՀՏ-ների և ավանդական մեթոդների ուսուցման վերաբերյալ հարցաթերթիկներ: Հարցաթերթը լրացրել են 23 աշակերտ: Հարցվողներից 20-ը նշել են, որ հետաքրքիր է դասը, մնացած դասերից տարբերվում է , պատկերավոր է և հետաքրքիր, լավ է հասկանում դասը: Այն հարցին, թե ավելի ուշադիր են դասին, 23 աշակերտներից 20-ը պատասխանել են՝ այո, 2-ը՝ ոչ այդքան, 1-ը՝ ոչ: Մյուս հարցին, թե ցանկանում եմ, որ բոլոր դասերը ՏՀՏ-ների կիրառմամբ լինեն, 23 աշակերտներն էլ պատասխանել են՝ այո: Հարցվող աշակերտները գրել են , որ լավ է տպավորվել խաղ–վարժությունները և ցանկություն հայտնեցին՝ դասերի մեծամասնությունը անցկացնել նմանատիպ մեթոդներով:



Արդյունքները կամփոփենք: Աշակերտներին կբաժանեմ գնահատման ռուբրիկներ,որի միջոցով կկատարվի ինքնագնահատում:

Ստուգելու համար, թե աշակերտների մոտ ինչ մոտիվացիա է առաջացել , կազմել եմ հարցաթերթ, որը լրացրել են սովորողները: ՏՀՏ-ների կիրառմամբ դասերը անցկացնելուց հետո աշակերտները լրացրել են հարցաթերթ՝ ՏՀՏ-ների կիրառմամբ դասերի վերաբերյալ և ավանդական ուսուցման վերաբերյալ: Հարցաթերթը լրացրել են 23 աշակերտ: Հարցվողներից 20-ը նշել են, որ հետաքրքիր է դասը, մնացած դասերից տարբերվում է , պատկերավոր է և հետաքրքիր, լավ է հասկանում դասը: Այն հարցին , թե ավելի ուշադիր են դասին, 23 աշակերտներից 20-ը պատասխանել են ՝ այո, 2-ը՝ ոչ այդքան, 1-ը՝ ոչ: Մյուս հարցին, թե ցանկանում եմ , որ բոլոր դասերը ՏՀՏ-ների կիրառմամբ լինեն, 23 աշակերտներն էլ պատասխանել են ՝ այո: Հարցվող աշակերտները գրել են , որ լավ է տպավորվել խաղ–վարժությունները և կուզեին բոլոր դասերին շատ խաղ-վարժություններ լինեն:

Այս նույն ամփոփման, ամրակայման դասը անց եմ կացրել 8–րդ Բ–ում, ոչ ժամանակակից մեթոդներով:Դասարանը բաժանել եմ 4 խմբի: Յուրաքանչյուր խմբի համար նախապես պատրաստել էի հարցեր, որը բաժանեցի աշակերտներին: Դասը հետաքրքիր էր, աշակերտների մի մասը ակտիվ մասնակցեցին խմբային աշխատանքին, իսկ մյուս մասը պասիվ էր, նրանք լուռ նստել էին, ոչ մի հարցին չպատասխանեցին:

Ես ժամանակ առ ժամանակ փոփոխում էի ուսուցման ձևերը, որ տեսնեմ արդյունքը: Հարցմանը մասնակցել էին 21 սովորողներ: Այն հարցին, թե հետաքրքիր է ավանդական ուսուցումը, նրանցից 4–ը պատասխանել էին՝ այո, 15-ը՝ ոչ այդքան, 2-ը՝ ոչ: Մնացած դասերի նման է հարցին հարցվողներից 15-ը պատասխանել էին՝ այո, 4-ը ոչ այդքան, 2-ը ոչ: Ավելի լավ եմ հասկանում դասը հարցին 4-ը պատասխանել էին՝ այո, 15-ը՝ ոչ այդքան,2-ը ոչ: Ցանկանում եմ , որ բոլոր դասերը ավանդական ձևով լինեն հարցին հարցվողներից 1-ը պատասխանել է՝ այո, 18-ը՝ ոչ այդքան, 2-ը ոչ:

Այս աղյուսակը վերաբերում էր ավանդական դասավանդման ձևին:


Ավանդական մեթոդի հարցման արդյունքները
20
0
Հետաքրքիր է
Մնացած դասերի նման է
Լավ եմ հասկանում դասը
Ցանկանում եմ , որ բոլոր դասերը ավանդական ձևով լինեն
Այո
Ոչ այդքան
Ոչ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքիս վերլուծության արդյունքում գալիս եմ մի շարք եզրահանգումների.

. Չկան անտարբեր, անհետաքրքիր, թույլ սովորող, դասը խանգարող աշակերտներ:

.Կան անհետաքրքիր, ձանձրալի դասեր, որը երեխայի մեջ չի արթնացնում սեր ու հետաքրքրություն:

Երկու դասարաններում կատարածս հետազոտություններից հետո, ես հասկացա, որ երբ ուսուցիչը դասը կազմակերպում է արդյունավետ, հետաքրքիր, զանազան դիդակտիկ նյութերով, նորագույն մեթոդներով, ՏՏ–ով, աշակերտները մեծ ոգևորությամբ են մասնակցում դասին, չեն լինում դասը խանգարող, պասիվ աշակերտներ: Երբ զուգահեռ դասարանում դասը վարեցի նույն օրվա պլանով և ավանդական մեթոդներով, եղան աշակերտներ, ովքեր ձանձրացան և հետաքրքրություն չցուցաբերեցին: Նույնը մյուս դասարանիի մասին ասել չեմ կարող: Աշակերտները մեծ ոգևորությամբ էկրանի վրա աշխատեցին, կարողացան ընտրել ճիշտ պատասխանները: Նույնիսկ չառաջադիմող երեխաներն էին ակտիվ մասնակցում աշխատանքին: Դասը անցավ ակտիվ, հետաքրքրիր, բոլորը ցանկանում էին գալ էլեկտրոնային գրատախտակի մոտ, շոշափել, փորձել առաջադրանքը կարդալ, հասկանալ և կատարել: Կատարած հարցումներից հետո ավելի ակնհայտ եղավ, որ առարկայի նկատմամբ սերը և հետաքրքրությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է պարզապես լինել որոնող,լինել նորարար, փնտրել և գտնել այն բանալին, որով կարելի է բացել դեպի գիտելիք տանող նոր ու հետաքրքրիր աշխարհ:

Այսօրվա մանկավարժը գիտակցում է՝ ինչ դժվարին գործ է իրեն բաժին ընկել, և նա գիտակցում է, որ ազգի ֆիզիկական և հոգևոր գոյությունը կախված է նաև իրենից: Արժեքային համակարգը անթերի կձևավորվի այն սովորողի մոտ, ում դասավանդում է բարձր արժեքներով, իր առարկայի նկատմամբ անսահման սեր ունեցող օժտված մանկավարժը,իսկ հակառակի մասին խոսելն անիմաստ է: Երբ ինձ հարցնեն՝ ո՞րն է ամենաստացված ժամանակակից մեթոդը, որի միջոցով կխթանենք աշակերտների հետաքրքրությունը առարկայի նկատմամբ,ես կասեմ՝ դա անմնացորդ նվիրումն է ու սերը աշխատանքի նկատմամբ. աշակերտը լավ գիտի՝ ո՞ր ուսուցիչն է սիրով մտնում դասարան, և ո՞ր ուսուցիչն է պարզապես կատարում իր աշխատանքը: Պատահական չէ՝ ժամանակին մանկավարժությունը համարվել է փիլիսոփայության մի ճյուղ, և մենք պատասխանատու ենք անձի ձևավորման, դաստիարակության,կրթության ու ուսուցման համար:

Գրականության ցանկ

1. Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազման գործընթացում, Երևան,2014, 48 էջ

2.Խաչատրյան Ս., Ֆրիդրիխ Ալբերտ հիմնադրամ, Ուսուցման աղյունավետ հնարներ Երևան ,2020, 76 էջ

3.Հայրապետյան Դ.,Ռ, Ստեղծարարության զարգացման և անձնային առանձնահատկությունների դրսևորման օրինաչափությունները, Երևան ,2017, 21 էջ

4. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես 5-6, Երևան, 2003 8. Պողոսյան Ս., Ստեղծարար կառավարում, մեթոդական ուղեցույց, Երևան, 2018 ,80 էջ

5. Грецов А.,Г., Тренинг креативности для старшеклассников и студентов,СПБ., Питер, 2007. 208 ст

6. Torrance E.,P, The Nature of Creativity, Cambridge:Comb.,Press. 1988,p.

7.(Маслоу А. Мотивация и личность. – СПб., 2006, էջ 126

8. Божович, Л. И., Проблема развития мотивационной сферы ребенка, М.: Педагогика, 1972, էջ՝ 44):

9.(Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М.: Просвещение, 1990, էջ 46) :

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասի օրվա պլան

Ուսուցիչ- Սաթինե Խաչատրյան

Դասարան – VIII^{գ}

Ամսաթիվ- 17.02.2023թ.

Նպատակը - 1. Իմանան հեղինակի կենսագրության, կարևորագույն փաստերը, ստեղծագործություններից մի քանիսը:

3.Կարողանան հեղինակի մասին որոնել կենսագրական տեղեկություններ, համակարգել և ելույթ ունենալ դասարանի առաջ:

4.Կարողանան պատասխանել ամփոփիչ հարցերին, արտասանել քառյակներ, բանաստեղծություններ, իրականացնել խմբային աշխատանք:

Վերջնարդյունք – 1. Կարողանան `

արտասանել բանաստեղծություն, հատվածներ պոեմից և բալլադից, քառյակներ:

2. Կատարել վերլուծություններ Թումանյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ:

3. Ներկայացնել Թումանյանի կենսագրական գործունեության կարևոր փաստեր տարբեր տեսանկյունից:

4. Խմբի անդամների հետ մասնակցել հարցերի քննարկմանը:

5. Լիլիթն ու Տիգրանը կարողանան արտասանել քառյակները:

Մեթոդներ – հարց ու պատասխան, խմբային աշխատանք, ՏՀՏ;

Ձեռնական պարագաներ – դասագիրք, տետրեր, պաստառներ, հեղինակի 10 իրերի նկարները, համակարգիչ, քարտեր, պրոյեկտոր:

Ընթացքը - 1. Դասի սկզբին աշակերտները կդիտեն տեսանյութ, (3_5 րոպե) որից հետո ուսուցիչը կտա ուշադրությունը ստուգող հարց. Ինչ կապ տեսաք Կոմիտասի, Թումանյանի և Արմեն Տիգրանյանի գործունեության միջև:

2. Աշակերտները հերթով կներկայացնեն հետաքրքիր պատմություններ

հեղինակի կյանքից, կհիշեն գրողի նախասահրությունները, գրական գործունեությունը ,

ինչպես նաև կփորձեն ներկայացնել Թումանյանին որպես հայր, ամուսին, ընկեր և

քաղաքացի(15_20րոպե):

3. Երգ – Ամպի տակից ջուր է գալիս:

4.Գունավոր թղթերի միջոցով դասարանը բաժանել խմբի: Յուրաքանչյուր

խմբին կտրվի 5-ական հարց: (հարցերը կազմել եմ learningapp կայքով: (15րոպե) :
Առաջին խումբ

6. Որն է Թումանյանի տոհմական զինանշանը:
7. Վերականգնել քառյակի խառը տողերը:
8. Ինչ է ասել Թումանյանը Հ. Քաջազնուն Կովկասյան լեռների մասին:
9. Որ ստեղծագործության առիթով է Աղայանը գովել Թումանյանին ինչի համար հեղինակը ասել է << Սրա-նրա մոտ այնքան է գովել, որ խալխը հենց գիտի Բայրոնի ազգականն եմ>>;
10. Թումանյանը որ կին գրողի համար և ինչու գնեց կապույտ հավկինթներով կողով, ծաղիկների հետ կապված ինչ զավեշտական բան կատարվեց:

Երկրորդ խումբ

7. Որ ստեղծագործունեության հիման վրա է Ալեքս. Սպենդիարյանը գրել <<Ալմաստ>> օպերան:
8. Շարունակել
   Աշխարհում հաստատ չկա ոչ մի բան, ու մի հավատա…
9. Թումանյանի որ ստեղծագործությունն է սկսվում հետևյալ տողերով:
10. Բարձրագահ Աբուլն ու մթին սարեր…
11. Որ թղթադրամի վրա է պատկերված Հովհ. Թումանյանը:
12. Վերականգնել բանաստեղծության տողերը:

Երրորդ խումբ

6. Ներկայացրեք Թումանյանի 10 իրերը:
7. Վերականգնել բանաստեղծության խառը տողերը:
8. Նշվածներից ով է Թումանյանի սրտակից ընկերը:
9. Ինչ նպատակ ուներ Վերնատունը: Ովքեր էին հիմնադիրները:
10. Ներկայացրեք հայ գրողներից որևէ մեկի գնահատության խոսքը ուղղված Թումանյանին:

Արդյունքները կամփոփենք: Աշակերտներին կբաժանեմ գնահատման ռուբրիկներ,որի միջոցով կկատարվի ինքնագնահատում:

Դասի օրվա պլան

Ուսուցչի ազգանուն, անուն- Ս.Խաչատրյան

Առարկա- Գրականություն

Դասի թեման- Միսաք Մեծարենց կյանքը և գործունեությունը

Դասի տեսլա կանը	**Դասի նպատակը**	*Կարևոր դրույթները* Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:	*Անհրաժեշտ նյութերը* Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար- դիդակտիկ պարագաներ:
	1. Այս դասին սովորողը կիմանա Մ. Մեծարենցի կյանքը և գրական գործունեությունը: Հաջորդ դասերի համար այսօրվա գիտելիքը կօգտագործվի գրական ստեղծագործությունները առավել լավ յուրացնելու համար: Կապը այսօրվա կյանքի հետ: 1. Արդյո՞ք ստեղծագործում են երիտասարդները: 2. Դասը կապում ենք մորը, սիրելիին, բնությանը արտահայտչամիջոցներով:	1. Սովորողը գիտի արևմտյան գրողներին (Սիամանթո, Զոհրապ, Պետրոսյան Դուրյան, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ)	Գիրք, տետրեր, պաստառ, հեղինակի նկար:
Դասի ընթացքը, մեթոդ	**Գնահատում** Նկարագրեք ինչպես պետք է չափեք մասնակիցների առաջընթացը կամ դասի նպատակի իրականացումը: Կցեք ամենօրյա գնահատումը, որը պետք է լինի համաձայնեցված, հավակնոտ, չափելի և իրատեսական:.		

ները	4- Հեղինակի կյանքի և գրական գործունեության մասին նվազագույնը 5 տեղեկություն: 5/6- Սովորած տեղեկությունների վերաբերյալ հարցերին է պատասխանում, փորձում է հետևություն անել: 7- Տիրապետում է կենսագրական տեղեկություններին, գիտի ստեղծագործությունը և դրանց մասին որոշ տեղեկություններ, պատասխանում է առաջադրված հարցերին: 8- Տիրապետում է կենսագրական տեղեկություններին, գիտի ստեղծագործությունը և դրանց մասին որոշ տեղեկություններ, պատասխանում է առաջադրված հարցերին: Իմանալ գրողների գնահատանքի խոսքերը Մեծարենցի մասին: 9/10- Տիրապետում է կենսագրական տեղեկություններին, գիտի ստեղծագործությունը և դրանց մասին որոշ տեղեկություններ, պատասխանում է առաջադրված հարցերին: Տիրապետում է կենսագրական տեղեկություններին, գիտի ստեղծագործությունը և դրանց մասին որոշ տեղեկություններ, պատասխանում է առաջադրված հարցերին: Իմանում է գրողների գնահատանքի խոսքերը Մեծարենցի մասին: Ներկայացնում է լրացուցիչ հավելյալ տեղեկություններ, կատարում է խելամիտ վերլուծություններ:

Դասի սկիզբ
Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս են սովորելու: Կատար՞ր հիմա... Խթանիչ վարժություն, եթե կա:

Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
Արտասանում է մի հատված և առաջադրում է հարց՝ պարզելու՝ ում ստեղծագործությունն է: Ուղղորդող հարցեր Ոչ ոք ըսավ- հե՛գ տղա, Արդյոք ինչու կը մըխա, Թերևս ըլլա գեղանի, Թե որ սիրեմ, չը մեռնի: Զրույց Դուրյանի մասին, ով հիվանդ է եղել թոքախտով, ապրել է շատ կարաճ և թողել մեծ ժառանգություն:	Փորձում են պարզել ստեղծագործության հեղինակին՝ նշելով մի քանի հեղինակներ:	Ուղղորդող հարցերով ուսուցիչը փորձում է օգնել աշակերտներին:

Նոր նյութի ներկայացում
Ի՞նչ են սովորում աշակերտները : Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Արդյո՞ք այս ինֆորմացիան բխում է կարևոր դրույթներից:

Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը

Դասարանը բաժանում է 4 խմբի: Քառաբաժանի թերթիկները բաժանում է աշակերտներին, բացատրում է աշխատելու ձևը, ըստ որի, տեքստը ըստ քառաբաժանի 4 պահանջների, ընտրում և նախապատրաստում է, որպեսզի աշակերտները կարողանան ներկայացնել:	Յուրաքանչյուր խումբ դասի համապատասխան հատվածից համառոտ մտքեր է դուրս գրում և սովորում: 15րոպե Լիլիթին հանձնարարել արտագրել Մեծարենցի մասին որևէ խոսք:	1. Կենսագրություն 2. Աշխատություններ 3. Վերաբերմունք բնության նկատմամբ 4. Գեղարվեստական մտածողություն:
Ուղղորդված աշխատանք Արդյո՞ք բազմակի հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու, օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիք/հմտությունը: Արդյո՞ք վարժությունները դասավորված են հեշտից դժվար: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվումէ, եւ աշակերտներին տրվում աջակցություն կամ ուղղորդումկարեւոր դրույթները յուրացնելու համար : Ինչպես եք կազմակերպելու ընկալման ստուգումները: Ինչ եղանակով եք անդրադառնալու սխալներին:Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է աշակերտներինինքնուրույն աշխատելու : Արդյո՞ք կա դասը լսելու, մասնակցելու եւ համագործակցելուհստակ ձեւակերպված սպասելիքներ:		
Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
Ինքնուրույն աշխատանք Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու, կիրառելուստացած գիտելիքները : Արդյո՞ք ինքնուրույն աշխատանքում ընդգրկված է նպատակին տանող բոլոր գիտելիք/ հմտությունները: Ինչպես են կազմակերպվելու շտկումները:		
Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
Մ- ածև աղյուսակի կիրառմամբ, գիտելիքների իմացության ստուգում: Հրահանգում է ծանոթանալ աղյուսակին, որտեղ պետք է ըստ սյունակների փակցնեն գունավոր թերթիկների վրա եղած տեղեկությունները:	Կպչուն գունավոր թերթիկների վրա եղած տեղեկությունը ըստ սյունակների փակցնում են, տալիս մեկնաբանություններ: 15 րոպե	
Դասի ավարտ		

Ինչպես են աշակերտներըամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած նյութի կարեւորությունը:Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել են հիմնական դրույթները եւ հասել դասի նպատակին: Ինչո՞ւ/ինչպես են աշակերտները ընդգրկված լինելու:	
Ամփոփիչ հարցերի միջոցով ստուգել թե աշակերտները ինչ սովորեցին այս դասին:	
Տնային աշխատանք, եթե նախատեսվում է:	

Բաց դասի պլան

Առարկա՝ Մայրենի

Ուսուցչուհի՝ Ս. խաչատրյան

Դասարան 5ա

Դասի թեման՝ Երկնքից երեք խնձոր ընկավ /Հեքիաթի ամփոփում//

Դասի նպատակը – Ձևավորել գիտելիքներ հեքիաթի ժանրային առանձ-նահատկությունների մասին

- Համակարգել սովորողների ձեռք բերած գիտելիքները
- Հեքիաթի դաստիարակչական և ճանաչողական նշանակությունը

/ձևավորել սեր, հարգանք շրջապատող աշխարհի, կենդանիների, բնության նկատմամբ/

- Գեղագիտական ճաշակի ձևավորում
- Մտքերը ճիշտ, գրագետ, ինքնուրույն ձևակերպելու և արտահայտելու կարողություն
- Բառապաշարի հարստացում

Դասի տիպը՝ Խառը-համակցված

Միջառարկայական կապեր՝ կերպարվեստ, երաժշտություն, ռուսաց լեզու

Մեթոդներ, հնարներ՝ մտագրոհ, զրույց, հարց ու պատասխան, դերային խաղ

Անհրաժեշտ պարագաներ՝ դասագիրք, նկարներ, համակարգիչ, սահիկներ, տեսաֆիլմեր,լուսացրիչ, հարցաթերթիկ:

Դասի ընթացքը՝ - Կազմակերպչական մաս - /2 րոպե/

- Տնային աշխատանքի ստուգում

<<Հեքիաթի աշխարհում>> բանաստեղծության արտասանություն

Մտագրոհ - խթանիչ հարցեր /8 րոպե/

1. Ի՞նչ է հեքիաթը
2. Հեքիաթի տեսասկները
3. Հեքիաթի կիառուցվածքը

Իմաստի ընկալում / 20 րոպե/

Դասարանը բաժանել 2 խմբի /տղաներ և աղջիկներ/

Աշակերտները պերք է վերհիշեն անցած հեքիաթները և ներկայացնեն հանելուկների ձևով

1. Երեխաների երևակայության զարգացմանն ուղղված ստեղծագործական աշխատանք,՝՝ Վերնագրիր նկարը,,
2. Դրային խաղ
3. Մուլտֆիլմերի դիտում, վերնագրերի կռահում
4. Կատարել բառային աշխատանք

Կշռադատում /10 րոպե/

Դասի ամփում- Ծառի վրա երեխաները տեղադրում են իրենց անցած հեքիաթներից դաստիարակչական մտքեր, ասացվածքներ

Գնահատում / 5 րոպե/

Տնային աշխատանքի հանձնարարում